Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 սեպտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սարգսյանը, Ն. Ավետյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ջրամբարների վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Ռիջիդ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25տ. հեռ. 093 355787	rigidalgroup@gmail.com
«Բագարանի Բարիք» ՓԲԸ	ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան, Գ. Մարզպետունու փ. 4-դ փակուղի 3 հեռ. 093 713204	dreamhouse.gnumner@mail.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **նախահաշվային արժեք – 806 675 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ – Մարմարիկի ջրամբարի ջրծեծ-ջրմարիչ հանգույցի վերակառուցման աշխատանքների				
	«Ռիջիդ» ՍՊԸ	580 000	-	580 000
Չափաբաժին 2 **նախահաշվային արժեք – 1 585 100 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ – Ապարանի ջրամբարի ճնշումային թունելի մետաղյա երեսպատվածքի վերականգնման աշխատանքների				
	«Ռիջիդ» ՍՊԸ	980 000	-	980 000
	«Բագարանի Բարիք» ՓԲԸ	1 300 000	-	1 300 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«Ռիջիդ» ՍՊԸ-ն** հայտ է ներկայացրել 1-ին և 2-րդ չափաբաժինների համար, սակայն Հավելված 3-ը և կից փաստաթղթերը ներկայացվել են միայն մեկ մասնագետի համար: ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերով՝ «Աշխատանքային ռեսուրսների» վերաբերյալ նվազագույն պահանջների չափանիշով սահմանվել է, որ երկու չափաբաժինների համար հայտ ներկայացնելու դեպքում՝ անհրաժեշտ է յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացնել առնվազն 1 մասնագետ: Հայտով ներկայացված չէ նաև «Մասնագիտական փորձառություն» չափանիշով պահանջվող՝ Առաջադրանքի կատարման համար պահանջվող սարք-սարքավորումների, կահավորանքների, անհրաժեշտ գործիքակազմի, լաբորատոր հետազոտությունների կարողությունները (դրանց առկայությամբ, կամ վարձակալում, կամ պայմանագրային հիմքով լիցենզավորված ենթակապալառուի ներգրավում և այլն):

Ընդ որում առաջադրանքի կատարման համար պահանջվող սարք-սարքավորումների, կահավորանքների, անհրաժեշտ գործիքակազմի, լաբորատոր հետազոտությունների կարողությունները հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց առկայության, կամ վարձակալության, կամ պայմանագրային հիմքով լիցենզավորված ենթակապալառուի ներգրավման կամ այլ ձևով հիշյալ ծառայությունների մատուցման կարողությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի** 2-րդ չափաբաժնի հայտով ներկայացված չէ ներառված մասնագետ Գևորգ Գևորգյանի հաստատած գրավոր համաձայնությունը բնօրինակից արտատպված (սկանավորված): Հայտով ներկայացված չէ նաև «Մասնագիտական փորձառություն» չափանիշով պահանջվող նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր և Առաջադրանքի կատարման համար պահանջվող սարք-սարքավորումների, կահավորանքների, անհրաժեշտ գործիքակազմի, լաբորատոր հետազոտությունների կարողությունները (դրանց առկայությամբ, կամ վարձակալում, կամ պայմանագրային հիմքով լիցենզավորված ենթակապալառուի ներգրավում և այլն):

Ընդ որում առաջադրանքի կատարման համար պահանջվող սարք-սարքավորումների, կահավորանքների, անհրաժեշտ գործիքակազմի, լաբորատոր հետազոտությունների կարողությունները հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց առկայության, կամ վարձակալության, կամ պայմանագրային հիմքով լիցենզավորված ենթակապալառուի ներգրավման կամ այլ ձևով հիշյալ ծառայությունների մատուցման կարողությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ **«Ռիջիդ» ՍՊԸ** -ի և **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«Ռիջիդ» ՍՊԸ-ին** և **«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ին** մինչև

կասեցման ժամկետի ավարտը (15.09.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Անդամներ ---------- Կ. Սարգսյան

---------- Ն. Ավետյան

---------- Ս. Ալեքսանյան

Քարտուղար ---------- Ս. Գալստյան